Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի ԹԻՎ ԹԻՎ 88-Ա ԵՎ 89-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 88-Ա որոշման նախաբանում «731-Ն» և «912-Ն» բառերից հետո գրառված «որոշմամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «որոշման 1-ին կետով» բառերով:

Բացի այդ, որոշման 3-րդ և 5-րդ կետերի ենթակետերը ճիշտ չեն համարակալված:

Որոշման 5-րդ կետի «գ» ենթակետում գրառված «կետով» բառն անհրաժեշտ է փոխարինել «ենթակետով» բառով:

Թիվ 89-Ա որոշման վերնագիրը չի համապատասխանում որոշման բովանդակությանը (տրամադրել/սահմանել):

Որոշման նախաբանում հղում է կատարվել ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 50-րդ կետին, համաձայն որի անշարժ գույքին հասցե տրամադրելու համար գույքի սեփականատերը (օգտագործողը) դիմում է ներկայացնում հասցեների տրամադրման լիազոր մարմին: Սակայն տվյալ դեպքում համայնքի ղեկավարը հասցե է տրամադրել համայնքային սեփականությունը համարվող անշարժ գույքին, հետևաբար նշված հղումը սխալ է:

Բացի այդ, համայնքի ղեկավարը համայնքի սեփականությունը համարվող անշարժ գույքին տրամադրել է հասցե՝ հիմք ընդունելով քաղաքացի Ղուկաս Սրապի Մանուկյանի դիմումը:

Կատարող՝ Շ. Շաքարյանց
26.07.2020թ.